



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16523

361
2-24

L n Cynl.

1903

361
2-24

ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ

ԲԱՐԻՁԻ ԱՌԵՒԱՆԳՈՒՄԸ



Հ Ա Ի Ա Ք Ա Մ Ո Ց

*Որքանոցիս դեմ եղած յարձակմանց
Տեսչութեան կողմէ սրուած պատահասկներու.*



ԼՈՆԾՈՆ

ՏՊԱՐԱՆ ՀԱՅԿԱԿՈՏՆ ՈՐԲԱՆՈՑԻ, ՉԻԿՎԷԼ.

1903

2010

7061

ԵՎԵՐ ԸՈՑ ԲՈՒՍԱՅԱՆՆ 8


ՅՈՒՐԱԿ ՈՐՓ ԿՄԱՅԱՆԱ
ԲԱՐԻՉ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ
ԽԵԴՐՈՅՆ ՇՈՒՐՁԸ.



361+323.1(91.54)

Ն Ա . Խ Ա . Բ Ա . Ն

2-24



Ա Ս Պարսկաստանէն և Կովկասէն մեր Լոն-
տրայի որբանոցին համար բերուած որբերուն
Քարիզի Հայ խմբակէ մը առեանդուելու
խայտառակ դէպքը յայտնի է :

4001
1008
36932

Խմբակին պետերն ու գործիչները, որ
առեանդման խայտառակութիւնները գործեցին,
միամտութեամբ իրենց յանձնուած վաւերաթղ-
թերն ու յանձնարարականները սուտերով գող-
ցան, խիղճ չըրին նաև ծեծերով ու հայհոյութիւն-
ներով ազոց վրայ բռնանալ՝ ականջնին բոցելով
անոնց լացերուն ու աղաչանքներուն :

Ասկէ զատ համարձակեցան նաև հրապարակը
ողողել սուտերով ու խեղաթիւրումներով, և նախա-
տինքներ չի թողուցին տեղացին մեր վրայ, որ-
պէսզի գործին ուրիշ գոյն մը տալով խայտառա-
կութիւննին ծածկեն : Բոլին թէ որբանոց չունինք,
ըսին թէ պարզ շահագործող մ ենք եղեր, թէ
որբերը գործիք, արհեստ, ապրուստի միջոց ըրեր
ենք, թէ որբերուն ճանապարհածուխսը քանի մ'
անգամներ հաւաքեր ենք, և շեմ՝ գիտեր ինչեր,
ամենը մութ տեղը նենտուած քարեր :

Այս ամենուն կէտ առ կէտ լրագիրներու մէջ պա-
տասխանեցինք ժամանակին և հիմա կուզանք զա-
նոնք հասարկելով անփոփ ձևով մը տալ հասարա-
կութեանը, որպէսզի հասկնայ թէ ո՞վ է ար-

2002



ժանի դատուել ու դատապարտուելու իր ատենանին անջև. (*)

Կը մնար միայն հաւաքուած ճանապարհաճախսին հաշիւը ներկայացնել, որմէ պիտի հասկցուի թէ, ինչպէս ուրիշ ամեն կէտերու մէջ նոյնպէս հոս ալ, խմբակը խաբուած կամ խաբած է սուտերով և ճրի ենթադրութիւններով:

Ճանապարհաճախսին համար անուած մեծ ու փոքր գումարներուն փոխարէն որբանոցիս կնիքով կնքուած և թուահամարով նշանակուած ստացադրիր տրուած են առանց բացառութեան. իւրաքանչիւր ստացադրի դիմացը կը նշանակենք տրուած գումարը, որով հաւատարիմ մնալով իրենց շատերուն փափագին և մեր խոստման, նուիրատուաց մէկ մասին անոնները հրատարակած չենք ըլլար, միանգամայն թէ իրենք և թէ հասարակութիւնը միջոց կունենայ հասկնալու թէ որչափ ստակ հաւաքուած է և որչափ ծախսուած:

Ըստ այսմ ճանապարհաճախսի համար հաւաքուած ստակին ամբողջ գումարն է, թէ Մնդդիա հաւաքուածը թէ ճամբան հաւաքուածը, թէ աղղայիններէ և թէ օտարազգիներէ հաւաքուածը, 6386 ֆրանք 72 սանդիմ, իսկ ամբողջ ծախքը եղած է 6338.83. (Էջմիածնի գրքերով միասին, որոնց արժէքն է 238 -- 50 և որոնց համար ստացադրիր տրուած ըլլալուն -- թիւ 4 -- թէ մուտքին և թէ կլքին մէջ նշանակած ենք.) որով միայն 47 ֆր. 87 սանդ. մնացած է:

Կ. ԹՈՒՄՍԵԱՆ.

(*) Գրքոյիս երբ զերք հրատարակուելու նպատակաւ գրուած ըլլալով զրբէ մը գումարներու և մասերու կաղձակերտիւղ կանոնաւոր դասաւորութիւն փնտռելու չէ մէջը, այլ նոյն նիւթի վրայ տարբեր ժամանակ և տարբեր տեսակետներով գրուած յօդուածներու հաւաքածոյ մըն է:

ՊԱՐՄԿԱՍՏԱՆԷՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԷՆ ԲԵՐՈՒԱԾ ՏՂՈՑ ԾԱՆԱՊԱՐՀԱԽԱԽՍԻ ՀԱՄԱՐ ՀԱՒԱՔՈՒԱԾ ԴՐԱՄԸ.

Թիւ Ստացադրի	Ֆր. Սան.	Թիւ Ստացադրի	Ֆր. Սան.
1 Oberholzer F.	100 00	33 Pfister J.	5 00
2 Աբրահամեան Ա.	13 25	34 Kunz	3 00
3 Սարգիսիւրեան Գ.	13 25	35 Kage.	1 50
4 Վէ. Կաթողեկոս— (61 Իրբ Գրեբ)	238 50	36 Feuer Inspector	1 50
5 Վէ. Կաթողեկոս.	132 50	37 Weber.	5 00
6 Նատրեան.	2 65	38 Breitenmann K.	2 00
7 Յովնանեան եղբարք.— Ռաստով.	132 50	39 Keige.	1 00
8 Մկրտիչեան Մ. "	10 60	40 Schubert Th.	27 00
9 Պալեւ. "	2 65	41 Vortrag in R.	80 00
10 Եկատրիէայ Յովնանի Գիշատակն.	556 50	42 Kage kinder	5 00
11 Leopold J.	2 00	43 Moller H.	5 00
12 Վեհմ. Նարման Խան Վեհնա.	100 00	44 Hosli.	2 00
13 Hedinger. Suisse.	5 00	45 Kerklicher R.	26 00
14 Muller J.	5 00	46 Muller A	5 00
15 Gnehm	5 00	47 Pfischer P.	3 00
16 Schultes	5 00	48 Ramps H.	5 00
17 Zwei Geschwister	11 00	49 K.D.E.F.G. in w.	128 00
18 Ungenant	4 00	50 Sturzingen O.	20 00
19 Wissmer E.	15 00	51 Ruek	10 00
20 Schul kinder W.	5 00	52 Heizmann.	1 00
21 Vortrag in N.	53 00	53 Schuller J.	2 00
22 Weilenmann	5 00	54 Schindler.	50 00
23 Flach. J.	5 00	55 Schnell.	5 00
24 J Wekmer	1 50	56 Schindler.	
25 Rellstab A.	35 00	& Tschudi.	30 00
26 Schul kinder D.	10 00	57 Riess O.	5 00
27 Beier.	100 00	58 Drinpe.	5 00
28 Vortrag in B	60 00	59 Anstats Kinder M.	5 00
29 Leiser. R.	50 00	60 Ungenant.	4 00
30 Benoid Dr. G. Von	50 00	61 Streiff E.	5 00
31 Gantenbein	5 00	62 Vortrag in M.	110 00
32 Brendli.	5 00	63 Schulthes H.	5 00
		64 Oberholzer F.	100 00
		65 Brunaschweiler L.	20 00
		66 Comittee Z.	200 00
		67 Vortrag in Z,	64 75
		68 Hummel H.	5 00
		69 " "	22 00

70	Rampp H.	22	00					3686	72
71	Escher.	5	00	99	1	0	0	25	00
72	Schaufelberge.	10	00	100	1	0	0	25	00
73	Rueck.	2	00	101	3	0	0	75	00
74	Brand i.	5	00	102	2	0	0	50	00
75	Brummer.	2	00	103	10	0	0	250	00
76	Rebsamis.	3	00	104	10	0	0	250	00
77	Remiss.	1	00	105	3	0	0	75	00
78	Keller Familie.	2	00	106	4	0	0	100	00
79	Beumann	2	00	107	3	0	0	75	00
80	wakerli.	2	00	108	2	0	0	50	00
81	Muller.	1	00	109	4	0	0	100	00
82	Henegger	2	00	110	20	0	0	500	00
83	Naueli.	1	00	111	2	0	0	50	00
84	Matken Heim Z.	5	00	112	3	0	0	75	00
85	Fress.	10	00	113	3	0	0	75	00
86	Stachlin	100	00	114	3	0	0	75	00
87	Matken Heim Z.	30	00	115	2	0	0	50	00
88	Ungenant in W.	150	00	116	2	0	0	50	00
89	Ungenant.	1	75	117	2	0	0	50	00
90	Ungenant.	30	60	118	1	0	0	25	00
91	Տղաքների ունաց			119	2	0	0	50	00
	խնամակալներից.	196	10	120	1	0	0	25	00
				121	5	0	0	125	00
	Գումարն է Ֆր.	3296	10	122	3	0	0	75	00
	Ուկ. Շիւ. Բեն.			123	1	0	0	52	09
92	5	0	0	124	10	0	0	250	00
93	5	0	0	125	5	0	0	125	00
94	3	0	0						
95	1	0	0						
96	1	0	0						
97	0	10	0						
98	0	2	6						
	Ֆր.	3686	72						

Աւրոզը ստացուած
 դրամի գումարն է Ֆր: 6386 72

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԷՆ ԲԵՐՈՒԱԾ
 ՏՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՆՄԱՆՍԸ

1902.		Ռուբ.	Կոպ.
Յունիս	Պրն. Մ. Փերանի Որբերու խնդրոյ առ թիւ Պարկաստանից Լոնտոն զարու ու կրկին Պարսկաստան ճամբորդելու չամար ամբողջ ծախսը.	258	00
Սեպ.	19 չողու անցազրերի և զանազան տեղեր այլ առթիւ ծախսուածը	203	00
..	Տղայոց ֆանելայ ծածկոցներ, ծրարներ, սոսորակներ և ունաց շապիկ, զուլպայ ևւն	62	00
Հոկտ.	Պարսկաստանից—Ս. Էջմիածին ճանապարհորդութեանց և այլ ծախսերու.	88	00
..	Ս. Էջմիածնից Ալեքսանդրապոլի, Ղարսի, և Թիֆլիսի վրայով մինչև Աւստրիական սահմանազրուխտ սոսնակի, կառքի, և այլն.	422	00
..	Ճանապարհորդութեան ընթացքում ու տեղիքի, խմելիքի, չիւրանոցի, և այլն	68	00
Նոյեմբ.	Աւստրիական սահմանից մինչ Յիւրիս (Չվիցերայ) սոսնակի, սպառածի, չիւրանոցի, թրանվիլի, ուտելիքի և այլն.	240	00
..	Չվիցերայիում 10 օրվայ մէջ ճամբորդութեանց և այլ ծախսերու.	64	00
..	Տղայոց զլխարկ, զուլպայ, նկարելու.	27	00
Դեկտ.	Յիւրիսից—Բարիլ սոսնակի, սպառածի, ուտելիքի.	210	00
..	8 ամսուան մէջ նամակներու, չիւրան.	20	00
Յունվ. 1905	Պրն. Մ. Փերանիանի 7 ամսուան ամսական 50 սուբլուց	210	00
	Գումարն է	1874	00
	կամ Ֆրանք	4966	10
	Տղոց Բարիլէն Լոնտոն սոսնակի և զատի առթիւ մի քանի անգամներ ևրթեւեկութեան և այլ ճամբորդութեանց	515	75
	Հեռագիրներու և Պարսկ. և Ռուսիա Բարիլի ծախսեր, կերակուր, չիւրանոց և դատարանի:	664	40
	Էջմիածնայ զրքեր (երբ դրամ չաշ.)	258	50
	Մնացած դրամ	47	87
	Աւրոզի գումարն է	6586	72

ԲԱՐԻՉԻ ԱՌԵԻԱՆԳՈՒՍԾ ՈՐԲԵՐԸ



Բարիզէն գրուած կարգ մը թղթակցութիւններ հրատարակուեցան Վիւզանդիոնի մէջ, եւ կը լսենք թէ Պօլսոյ եւ ուրիշ տեղերու լրագիրներ ալ արձագանք տուին, որոնք այնպէս կը ներկայացնէին իրր թէ Տիար Էգնայեան 17 հայ որբեր որդեգրեր է Բարիզ, եւ մենք ալ անոր այդ բարի նպատակին արգելք հանելով, այդ որբերը ձեռքէն յափշտակել կուզենք եղեր: Մինչդեռ ինդիրը ճիշդ ատոր հակառակն է:

Հիմա որ գործը վախճանի մը յանգած է եւ գրգռուած ջիղերը հանդարտելով իրերն իրենց բնական ընթացքը առած են, ժամանակ է որ մենք ալ լռութիւնը խզենք ու ինդիրը համառօտիւ պարզենք հասարակութեան առջին, իր հանրական գիծերուն մէջ:

Արդ սխալ է, սուտ է թէ Էգնայեան որբեր որդեգրել, պահել ուզած ըլլայ ու մենք արգելք եղած ըլլանք, կամ տղաքը յափշտակել ուզած: Ընդհակառակն ինք, Տիար Էգնայեան, Բարիզի հարուստ գոհարավաճառն է որ յափշտակած կամ յափշտակել տուած է մեր Պարսկաստանէն բերել տուած 17 որբերը:

Լոնտրայի մէջ Հայկական որբանոց մը հաստատած ենք, Անգղիացի ծանօթ անձնաւորութիւններէ կազմուած քօմիթէի մը հովանաւորութեան տակ, որ մերինէն զատ ուրիշ ո՛ր եւ է ազգի մը պատիւ պիտի բերէր եւ անոր որբերուն օրհնութիւն ըլլար: Այս անգամ ուղելով ներսի գաւառներէն, իրօք կարօտ որբեր եւ խեղճ տղաքներ ընդունիլ, յանձն առինք անոնց ճանապարհածախսի հարկաւոր մեծ գումարն ալ հաւաքելու դժուարութիւնը, եւ պաշտօն յանձնեցինք իր մանկութենէն մեզի ծանօթ Պրն. Մ. Ս. Փիլանեանի, որ այդպիսի 17-18 տղաքներ կովկասէն եւ Պարսկաստանէն հաւաքելով բերէ Լոնտրա մեր որբանոցը: Եւ

ալ իր ստանձնած գործը ամենայն յաջողութեամբ եւ ճշգրտութեամբ կատարելով՝ իրենց ծնողներէն ու պաշտպաններէն յանձնուած 18 տղաքներ վեհափառ Հայրապետի գիտութեամբ եւ արտօնութեամբ կը բերէ մինչեւ Բարիզ, հազար ու մէկ զժուտութեանց յաղթելով: Հոս Բարիզի յայտնի խմբակը միջամտելով տղաքը վար զնել կուզէ եւ ի վերջոյ խարէութեամբ՝ տղոց շաքարեղէն կերցնելու պատրուակաւ՝ տուն տանելու հրաման առնելով կը փախցնէ եւ կը պահէ տղաքը, հակառակ անոնց բողոքներուն ու լացերուն:

Տիար Էգնայեանի պէս հարուստ ազգայինի մը հայ որբեր որդեգրելու լուրը ըստ ինքեան ուրախալի է: Ասկէ 5-6 տարի առաջ ալ ելած էր Պօլսէն որբեր ուղելու, ու Պօլսոյ խմբագիրներէն ոմանք ալ ընդգրկուեցան էին, սօքաքը պիտի շահագործէ ազադակելով: Բայց այս անգամ ինդիրը որբ որդեգրել կամ չ'որդեգրելու վրայ չէ, այլ ուրիշի մը ծաղքով եւ խնամքին տակ բերուած տղաքը, զորս ծնողքներ եւ պաշտպաններ յանձնած էին Լոնտրայի որբանոցը բերելու, առնել կը ջանայ եւ կ'առեւ անդէ:

Երբ նախ մեզմէ ինդրուեցաւ զանոնք Էգնայեանի յանձնել, պատասխանեցինք որ, թէ եւ ասիկայ շատ անտեղութիւններ կը պատճառէ մեզ, քանի որ անոնց ընդունելութեան համար ամէն պատրաստութիւն տեսնուած է, սակայն ուղելով ազգային հարուստի մը այս բարի նպատակը յաջողցնելու ձեռնառ ըլլալ, յանձն կտանենք զայնս ձգել պայմանաւ որ 1. տղոց հաւանութիւնը ստնուելի, 2. Էգնայեան գրութիւն մը տայ թէ տղոց պատասխանատուութիւնը ինք ստանձնած է, եւ 3. անոնց մինչեւ Բարիզ ճանապարհածախսը վճարուի, որպէս զի անոնց տեղ ուրիշներ բերուին, որոնք թախանձագին կաղաչէին, բայց չէինք կրնար բերել: Երբ տեսանք թէ խմբակը մեզ խարելով ժամապաճառ ըլլալ կուզէ՝ մենք

ուղղակի էզնայեանի գիմնցինք: Նա բացէ ի բաց մերժեց ստակ մը տալ ճանապարհածախսի համար եւ ըսաւ. ալ որ եթէ կուզէք ազատ էք որբերնիք, առնել երթալ: Ատոր վրայ էր որ երբ մենք որբերով ճամբայ ելլելու կը պատրաստուէինք, էզնայեանի ր արբանեակներու խումբին ձեռքով որբերը փախցունել տուաւ:

Եթէ էզնայեան որբեր կուզէր ինչ՞ու գաւառներու եւ Պարսկաստան ապաւինածներու հարիւրաւոր անաէր որբերէն բերել չի տար: Անոր համար որ որբեր բերել տալը այնչափ ալ հեշտ չէ. ծախքին խնդիրէն զատ ուրիշ շատ դժուարութիւններ ալ կան եւ ուստի այս պատրաստ բերուածները ձեռք անցունել կուզէր: Եթէ մենք իր սիրոյն համար կը զիջանինք ամէ՞: դժուարութիւններն եւ ժամանակի կորուստը զոհելով տղաքն իրեն յանձնել, ինչու ինքն ալ կը զլանայ դոնէ անոնց ճանապարհածախսը վըճարել, որով մեզ հնարաւոր պիտի ըլլար նորեր բերել անոնց տեղը: Ասկէ աւելի անիրաւ, անօրէն, անխիղճ գործ կր՞նայ երեւակայութիւլ:

Ամէն անգամ որ ճանապարհածախսի խօսք կըլլար «Եզրայր ինչ կըլլայ, քսակէդ չի տուիր ես՝ կըսէին, անկէ ասկէ ժողկցիր» որբերուն համար եւ ծախսեցիր որբերուն համար, եթէ նպատակդ բարեք ընել է ուրախ ըլլալու ես որ էզնայեան յանձն կուռնէ զայնս որդեգրել. որբերը Բարիզ են մնացեր Լոնտրա են գացեր բարեք բարեք չ՞է մը» յանգերդ կը կրկնէին: Չի կրցինք ասոնց հասկցնել թէ այդպէս չէ, թէ այսինչ նպատակի համար հաւարուած ստակ մը այնինչ ուրիշ նպատակի գործածել շիտակ չէ, քանզի մէկը մէկ բարեքի համար կուտայ, իսկ ուրիշ բարեքի համար չիտար: Եթէ այդպէս թոյլ բռնուի եւ նպատակներ չի յարգուին, յայնժամ բոլոր բարեգործական աշխարհը իրար կանցնի, հիւազանոցք, որբանոցք, եկեղեցիք եւ զպրօցք իրարու կալուածոց, եկամտօտնե-

րու եւ կտակներու տիրանալ կը հետամտին: Եթէ, զոր օրինակ, Գալֆաեան որբանոցը իւրացնել ուզէր Ս. Փրկչի որբանոցի մէկ կտակը, պնդելով թէ ան ալ որբանոց է ան ալ, շիտա՛ կըլլ՞այ: Սակայն այս ամէն փաստեր եւ օրինակներ անգոր էին մեր խմբակին վրայ ազդելու, որոչւած էին որ սա բերուած պատրաստ տղաքը առնեն, իրաւունք, արդարութիւն փնտռող չիկար:

Ասկէ զատ յափշտակութենէն վերջն ալ կրկին զիջանելով զացինք Պրն. էզնայեանի մէկ ազգականին գիմնցինք, որ այս ամօթալի խայտառակութեան առջեւն տռնէ: Նա պատասխանեց թէ էզնայեան չէ՝ զօք մնալ կուզէ, մինչդեռ անզին իւր արբանեակները կը գործէին իրեն համար:

Ալ աւելին կայ: Խմբակը ի հաշիւ էզնայեանի ամէն կողմ ծանուց թէ էզնայեան 17 որբ որդեգրւած է Բարիզ, եւ մինչեւ հիմա ալ այդպէս կը կարծէ հասարակութիւնը: Մինչ զեռ այդ առեւանդուած 17 էն միայն 9 հատ մնացած են իրենց քով: Առեւանդուածներէն 4 ը սիւրբէն իվեր այնչափ նեղութիւն տուած են անոնց լայով, սպառնալիքով որ ստիպուած են մի քանի օր վերջը կէս զիշերուն առնել բերել մեզ յանձնել: Վերջերս ալ ուրիշ 4 հատ յանձնել ստիպուեցան հակառակ ամէն խոստումներու եւ սպառնալիքներու: Եւ եկողները կը պատմեն թէ միւսներն ալ վազելով պիտի գան եթէ բռնութեան ճիրաններէն ազատին:

Այս պարագան բուական է էզնայեան ընկերաց զատապարտութիւնը կնքելու: Եթէ, ինչպէս կը հըրատարակէին ամեն կողմ, մենք շահագործող ենք, որչափ անխիղճ բաներ ըլլալու են իրենք որ զայն գիտնալով հանդերձ 2 անգամ 4 ական տղաքներ կը յանձնեն մեզի պէս շահագործողներու: Եթէ շահագործող ենք ինչ՞ու այդ 9 ը տղաքը յանձնեցին մեզ. եթէ շահագործող չենք եւ որբանոց ունինք, հակառակ դատարանը եւ լրագրաց մէջ եւ քահա-

նային միջոցաւ պնդածնուն, ինչ՞ու միւս ց տղաքը քովերին կը պահեն. քանի որ անոցմէ ոմանց խընամակալ—ազգականներուն գրաւոր որոշ խնդրանքները մեզ կը հասնին ի մասին իրենց տղաքը Բարիզէն առնելու :

Քանի մը խօսք ալ առեւանգուած տղոց Բարիզ անցուցած 50 օրուան կեանքին վրայ : Երբ լրագիրք փառաց ի փառս կը բարձրացնէին զէզնայեան իրր 17 որբեր որդեգրող. եւ խմբակը կը յայտարարէր թէ տղաքը լաւ ու հանգիստ են, անոնք անդին էզնայեանի մէկ գործաւորին տունը բանտարկուած եւ պաշարուած վիճակի մէջ էին եւ շատ անգամ դուռը վրանէն կը կղզուէր եւ ոմանք ալ կը ծեծուէին կը հայհոյուէին, ուրիշներ ալ պատերէն փախչելով ազատուիլ ու մեզի դալ կուղէին. որուն համար բօլիսին յանձնել բանտարկել ալ կսպառնայ եղեր Պրն. Գալփագճեան, խմբակին պետը : Կերակուրնին՝ թէ եւ ի սկզբան լաւ, յետոյ սկսեր է կամաց կամաց նուազիլ այնչափ որ երբեմն հացի համար կոխ կընեն եղեր, վրանուն անմաքրութիւնը կերելի թէ չափն ալ անցեր է : Այն 50 օրը որ առեւանգուած վիճակի մէջ էին մէկ անգամ լուացուած են, եւ կըսեն թէ ո՞րքիւր վրանէն կը թափէր, մինչեւ որ այն մի քանի Գաղղիացիներ որ ի ըսկզբան երբեմն կ'այցելեն եղեր, վերջերը զիրենք cochon (խոզ) կը կոչեն եւ ալ չեն գար եղեր : Մահիճնին կը կայանայ եղեր 7 խոտէ կամ մազէ պարզ մահիճներէ, զորս փոխելով տախտակամածին վրայ կը պառկին եղեր առանց հանդերձնին հանելու, իսկ իրր վերմակ իւրաքանչիւրը մէկ ֆանէլայ ունի եղեր հետեւաբար տղայք միշտ մտելու ենթակայ կըլլան, որուն համար ալ տղաքը երբ Բարիզի Տէր Վոամշապուհ Քհնյ. ին կը բողոքեն, «տղաքներս ես երբ մսիմ վերմակս գլուխս կը քաշեմ եւ շնչովս անկողինս կը տաք-

ցնեմ դուք ալ այդպէս ըրէք» պատասխանը կ'առնեն եղեր : Ի՛նչ չնայխարիկ եւ յանձնարարելի գիւտ պաղի դէմ գանգատող ազգատներուն : Հագած չապիկնին 3 շաբաթ վրանին մնացեր է, բարեբաղդաբար առեւանգուած օրերնին չապիկնին նոր փոխած էին :

Այս խեղճ տղոց ինչ անբարոյականացուցիչ վիճակի մէջ ապրած ըլլալը անկէ կրնայ երեւակայուիլ որ 50 օր, մանաւանդ վերջերը, վանցի տգէտ, խեղճու կրակ խոհարարի մը եւ իւր կնոջ հսկողութեան յանձնուած են եղեր, որով իրենք իրենց ձգուած առանց որ եւ է գործի կամ դադուամի, առտուէն մինչեւ իրիկուն կոխուով կանցուեն եղեր ժամանակնին, մինչեւ իսկ մէկ երկու անգամ իրարու դանակ քաշեր են :

Այս չափս բաւական կը համարենք առ այժմ հասկցնելու համար խնդրոյն սա զլիսաւոր կէտերը որ,


1. Չէ թէ մենք արգելք եղանք, առարկութիւն ըրինք էզնայեանի որբ որդեգրելուն, ալ իրենք մեր որդեգրած եւ բերած որբերը փախցուցին :

2. Երբ մեզմէ որբերը խնդրեցին, թէ եւ մեզ շատ դժուար էր ընդունել կզած առաջարկը, բայց իրեն սիրոյն համար զանոնք տալ յանձն առինք, պայմանաւոր ճանապարհածախսը զոնէ տայ :

3. Թէ 2 անգամ 4 ական տղաք մեզ յանձնած են որ կը ցուցնէ թէ կամ մենք շահագործող չենք եւ կամ իրենք այդ տղոց համար հոգ չունին որ մեզի պէս շահագործողներուն յանձնեցին :

4. Հետեւաբար էզնայեանի քով ոչ թէ 17, ալ միայն 9 տղաք մնացած են զորս բոնի կը պահեն, եւ անոնցմէ ոմանք ալ ազգական-խնամակալաց կամքին եւ խնդրանքին հակառակ :

5. Որ հակառակ իրենց յայտարարութեանց տղոց լաւ նայած չեն, մանաւանդ թէ դատարկ ու անզբաղ պահած են զանոնք բոլոր ժամանակ :



ՇԱՀՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԽՐՏՈՒԻԱԿԸ



Վերջին ժամանակներս Շահագործութիւն բառը կարգ մը անձանց համար շահագործումի լաւ միջոց դարձաւ : Երբ մէկը կամ հրապարակային անձնաւորութիւն մը հարուածել վնասել կուզեն , շահագործութիւն կը պտտան ետեւէն : Ազգը շահագործէ կոր , որբերը շահագործէ կոր : Բաւական է որ մէկուն համար այս բառը դրժածուի , եւ ահա ամէն ոք անկէ կը կասկածի , առանց բանը քննելու , եւ ինքն ալ իր կարգին կրտէ "կը շահագործէ եղեր" : Ասոնց աչքերնին գոյելով նետած քարերէն մեր պարտէզն ալ իյնալ սկսան : Մենք ալ որբեր կը շահագործենք եղեր : Տեսէք ինչպէս :

Լոնտրայի մէջ Հայկական որբանոց մը բացեր ենք ու այդ որբանոցին ղեկը որբերուն ձեռքը եւ կամ աւելի չիտակը զրսէն նախանձողներու եւ այդ խեղճ որբերը զրգուելով ձուկ որսալ ուզողներու ձեռքը չենք ձգեր , այլ մեր ձեռքին մէջ կը պահենք եղեր :

Անոնց գեղեցիկ եւ ամենէն նոր տարազով հանգերձներ չենք հագցնէր եղեր , ոչ ալ կօշիկնին թեթեւ եւ փայլուն , այլ մի քիչ ծանր եւ հաստաուն տեսակէն է եղեր , որուն վարժ չեն հայ աշխուական աղքատ աղոց փափուկ տաները , մինչդեռ պէտք էր որ Լոնտրայի ամէնէն նորր կօշիկներէն տրուէին իրենց : Նոյնպէս ալ շիկ զլխարկ , ձեռնոցներ , ժամացոյց , շղթայ եւ այլն եւ այլն տրուելու էր իրենց : Սրկար ծխելու ալ հրաման չունենալով կը նեղուէին եւ հիմա դուրսը ազատ համարձակ եւ հանգիստ կը ծխեն անոնցմէ ոմանք , Լոնտրայի պարտնի մը պէս :

Անոնց անդարար , բայց պարզ կերակուր կը տրուի եղեր , փոխանակ խորտիկներ ու համազամներու եւ այլն եւ այլն : Որոնց իրաւունք ո'նէին եւ մեր ալ

պարտքն էր տալ - իբրթէ իրենց հօրը ժառանգութիւնը մեր քովը մնացած էր : Եւ սակայն կերածնին այնպիսի բաներ էին որ ես եւ վարժապետը նստելով հետերնին ախորժով կուտէինք , եւ իրենց առողջապահական վիճակը այնչափ լաւ վիճակի մէջ էր որ Ծ-Յ սարուան միջոցին մէջերնին հիւանդութիւն կոչուելու արժանի ո'եւ է բան մը չի պատահեցաւ , այլ ամէնքն ալ առոյգ ու զօրաւոր դուրս եկան : Այս պարտններուն ախորժակն ու ստամոքսը այնչափ փափուկ էր որ կը յայտարարէին թէ իրօֆէսօրին ախորժակը տարած բաները իրենք չեն կրնար ուտել :

Անոնց միայն միջակ , լաւ կրթութիւն տուեր ենք եւ ոչ թէ բարձր եւ համալսարանական , որպէս զի մտամնծ զխնականներ եւ հրապարակագիրներ ըլլային : Որբանոց մը միայն այդպիսիներ հասցնելու է :

Արեւելքի մէջ վարժուածնուն պէս աղտոտ , անհոգ , անտարբեր մնալ թոյլ չի տալով՝ մաքուր մնալ եւ իրենց վրային գլուխին հոգ տանիլ կը վարժեցնենք , կտտիպենք եղեր , շատ զգուշութիւն կընենք եղեր որ աւելորդ բաներ հոս հոն պարտապ տեղը չի վասնուին , չի նետուին կամ կահ կարասիքը չի կոտրուին : Ազնուականներու կամ հարուստի զաւակներու պէս առանց գործի ծոյլ ու դատարկ չենք ձգեր եղեր : Հապա որբանոցին մէջ իրենց ընել կրցած գործերը իրենց ընել կուտանք եղեր . զոր օրինակ մէկը դասաբանը կառլէ , միւսը սրահր , միւսը ննջարանը մէկ ուրիշը ճաշարանը , չորրորդ մը լուացարանը եւ այսպէս , եւ այնչափ խիստ եւ անխիղճ մարդ ենք եղեր որ անքուն կը հսկենք եւ ամէն մէկուն իր գործը ընել կուտանք եղեր : Խեղճերը մեզ խաբել չեն կրնար եղեր :

Որբերուն չորս կողմը սպասաւորներ չեն դառնար եղեր . անոնց թափածը , նետածը կոտրածը ժողուելու , այլ կը նայինք եղեր որ իրենք իրենց բաւեն :

Դեղձակը միայն ժամանակ առ ժամանակ կուզայ

եղեր հանդերձնուն մեծ նորոգութիւններ ընելու, իսկ իրենց մանր մունր (կոճակի, օղակի, քակուածի) կարկտուքը իրենք ընել ստիպեալ են եղեր շարաթը մի անգամ ժամ մը կամ ժամուկէս ժամանակ: Եւ կարկտուքը կենաց մէջ իրենց շատ օգտակար նկատելով կը պահանջենք եղեր որ՝ (հարկաւ չարամտութեամբ) ամենքն ալ սորվին եւ ամեն շարաթ ընեն:

Մեր պարտեզը մենք ձեռքովնիս կը մշակենք եղեր առանց դրէն պարտիզպան բերելու, Հայ որբը այդչափ հասարակ բան է որ տարին մի քանի անգամ պարտեզ փորէ, մշակէ, անկէ, ջրէ այնպիսի բանջարեղէններ, զորս յետոյ ինք պիտի ուտէ: Ամէնքն ալ այնպիսի բաներ զորս շատ մը հայր, մայր ունեցող, մինչեւ իսկ հարուստ նկատող Սնգղ. ընտանիքի զաւակներ՝ ունենալ կը փափաքին:

Տղայոց զարգացման եւ որբանոցիս բարգաւաճման օգտակար համարելով՝ փոքրիկ տպարան մ'ալ աւելցուցեր ենք որպէս զի տղաքը իբր զբօսանք սորվելով թէ որբանոցիս մէջ եղած ժամանակնին օգտակար զբաղում մը լինի իրենց եւ թէ ապագային իրենց գործի միջոց մը լինի ի հարկին կամ երբ կարօտին, որուն գործնական ապացոյցը անոնցմէ ոմանց ի Լոնտոն ունեցած արդի սիրած զբաղումն է:

Հապա մեծագոյն շահագործութիւնս, Պատանի թերթը, զոր տղայոց զարգացման եւ իրենց նմաններու, հասակակիցներու օգտակար հանդիսանալու համար սկսանք, եւ իրենց ալ կարողութիւնը եւ յարմարութիւնը տեսնելով խմբագրութեան մէջ մեծ տեղ մը նշանակեցինք իրենց համար. մինչդեռ իրենք վախնալով որ մի գուցէ շահագործուին, յամառեցան, մերժեցին հնազանդելով ուրախութեամբ ընդունիլ իրենց եղած պատու ու բարիքը, եւ այսօր ելած շահագործում կը պտուան: Եւ կը գտնուին բաւական տիմարներ կամ չարակամներ ալ որ կը հաւատան եւ կը կլլեն այնպիսի հեքիսաթները, փոխանակ զիրենք խրատելու եւ ըրածնուն ամարդութիւն ցոյց տալու:

Ինչ մեծ Շահագործութիւն նաեւ ան որ երբ

իրենց պահանջկոտութեամբ ալ եւս անտանելի դարձան, փոխանակ պարզապէս զիրենք արտաքսելու ամենուն ալ արժանիքին ու յարմարութեանը համաձայն գործ մը գտանք ու գետեղեցինք որ աշխատին եւ ինքզինքնին սիրցնելով յառաջ երթան, գործի աէր ըլլան: Ելած ժամանակնին ալ ամենքը զրպաննին ստակ ունէին, այդ այ նորէն մեր շնորհիւ:

Երբեմն Հայկական խնդրոյ վրայ ատենախօսելու համար մի թիւնկներ կը կազմէինք. երբեմն ալ արդաքներէն մի քանին կը տանէի հետս որ սրտերնին բացուի հայասէր բարեկամներ տեսնելով, եւ բարեկամք ալ ուրախ ըլլան Հայեր, մանաւանդ Հայ տղաքներ տեսնելով: Ասիկա շահագործութիւն չէ՞ մի: Մանաւանդ շատ անգամ ալ ճիշդ վերջը տաքուկ թէյ մ'ալ կը խմէի եւ մի քանի ալ քէյք կուտէի տղոցը երեսէն եւ սաեաէն: Գուցէ ասիկա այնչափ մեծ շահագործութիւն չի սեպուի, որովհետեւ իրենք ալ այդ թէյին եւ կարկանդակներուն մասնակից կ'ըլլային: Բայց ճշմարիտ շահագործութիւնը սա է որ, այն մի թիւնկներէն գոյացած հասոյթի ներկայ եղող տղոց չէի բամներ, առ սա չափ քեզի, սա չափ քեզի չէի ըսեր, հապա, ինչպէս սովորութիւն է Սնգլիոյ մէջ, մի թիւնկը կարգադրողներուն ձեռամբ, որբանոցիս գանձապետին կը զրկուէր (հարկաւ ես գանձապետին հետ զաղտուկ կարգադրութիւն մը ունենալով՝ մէջերնիս կը կիսուէինք անիկայ, որովհետեւ Անգլիա, տօմար, հաշիւ, չըլլար հայաստանի պէս, ոչ՝ ալ հարցնող, փնտռող կ'ըլլայ հոս, հապա մարդիկ կուտան ստակնին առանց հարցնելու թէ ո՞ր կերթայ):

Որբեր շահագործելու ամենամեծ ապացոյցը ան է որ որբանոցը իմ իսկ անձնական ստակովս չեմ պտահեր եղեր այլ ուրիշներէ՞ կը հաւաքեմ եղեր զբամբ. եւ ահա ի մեծ ապացոյցը սա է որ անօթիներ կերակրած ժամանակս ես ալ կապրիմ եղեր փոխանակ անօթի մեռնելու: Եթէ գոնէ խեղճ ու աղքատ ու անօթի մեռնէի ամէն մարդ կը հաւատար իմ ան շահախնդ

րութեանս, եւ իրաւամբ մտածուիք թողում մը կը կատարէին: Եւ թէ ամէն անոնք որ իրենց անձնական ծաղրով չեն կրնար որբանոց բանալ կամ բարերարութիւն մը բնել մէջ իշխալու չեն առիկայ շահագործում է. եւ Հայաստանի մեծ բարերար ՏՖ. Լեփսիոս, եւ Պարզը Լօման եւ ուրիշ ամէն օտարազգի կամ Հայ ազգի որբախնամներ, որոնք ոչ թէ իրենց անձնական ստակով այլ ուրիշներէ հաւարած ստակով որբանոց կը պահեն, ամէնքն ալ շահագործողներ են, միայն Տիար Աթանազիէ Էջնայեան ճշմարիտ որբախնամ է քանզի իր ստակով պիտի պահէ եղբւր մեզմէ յափշտակած որբերը:

Ահա այս ամէն բաներուն համար ճշմարիտ ու կատարեալ շահագործող մըն եմ: Եւ, ես ալ ճշմարտապէս ուրախ եմ այսպիսի շահագործող մը բլլալուս համար: Աստուած ասը որ այսպիսիք շատնային ամէն կողմ:

Եթէ շահագործութիւն է Հայ ազգատղաքներ առնել, պահել, կրթել ու ապա համեստ գործի մը դընելը, որպէս զի ապրուստին ճարեն եւ իրենց ու այլոց օգնութեամբ յատաճայիմեն, հապա ինչ անուն տալու է այն կոչու ու կոպիտ ապերախտութեան որ այս ամէնը բնդունելով հանդերձ կելլէ՝ այսօր քանզի կը ճգնի այն տունը ուր 3, 4, 5 տարիներ ձրի կերու, խմեց, հապա, բնակեցաւ ու կրթուեցաւ:

Ասոնք անխորձ են ու չեն զիտեր եւ մայր կրնայ անտեսել, անդիտանալ, ներել: Հապա ի՞նչ բնելու է անոնց որ փոխանակ զայնս զղաստութեան բերելու կը գրգռեն, կը քաջալերեն զանոնք այս փաստակար ուղղութեան մէջ, որ մեզմէն աւելի տղայոց իրենց վնասակար ու կործանիչ է:

Ոչ, մենք այդ կարծիքէն չենք որ Հայ որբ կամ ազգատղայ մը անհրաժեշտ բարձր կրթութիւն մը ստանալու է: Թէ անոնք որ բան մը կրնեն անոնց համար, հարկաւ ամենամեծը, ամենաբարձրը ընելու են: Պատճառ մը չի կայ որ որբին եւ ազգատին ըլլուի այն ինչ որ միջին աստիճանի տէր անձինք չեն կրնար իրենց տղոց ընել: Նոյն-

պէս չենք կարծեր թէ որբանոց մը իր որբ կամ ազգատ տղաքները ամենայն փափկութեամբ մեծցնելու է, եթէ մինչեւ իսկ պէտք եղած միջոցները ունենայ: Փառաւոր տուն, չքեղ կահ կարասիք, մեծածախս սեղան, սուղ եւ նորագոյն մտալի վրայ շինուած հանդերձներ եւ այլն եւ այլն. ոչ ալ որբերու չափազանց սէրը պարտի զանոնք ծուլութեան եւ մեղկութեան վարժեցնել, անգործ ձգել, չորս կողմերնին ամեն ինչ սպասաւորներու ընել տալ: Ասիկա որբին ու ազգատին ոչ թէ բարիք այլ իսկապէս չարիք մը պիտի բլլար: Ասիկայ Անդրկական ճաշակին ու սովորութեանց բոլորովին հակառակ է, եւ մեր որբանոցին ալ միակ յանդանքը այդ փայլուն բաներուն պակասութիւնն է, եւ սակայն կը վստահացնէ՞ք որ թէ սնունդի թէ կրթութեան մասին Անդրկական շատ որբանոցներէն բարձր է:

Հայ որբ կամ ազգատ տղոց համալսարանական, կամ բարձր կրթութիւն մը տալու գործը մենք բարիզի մեծահարուստ Տիար Էջնայեանի կը ձգենք. անիկայ պիտի ընէ զայդ, տարին 35—40,000 Ֆրանք պիտի յատկացնէ այս գործին եւ վաւերացնէ կառավարութեան միջոցաւ, այսպէս յայտարարեցին իր ներկայացուցիչը դատարանին մէջ եւ Բարիզի Հայ գաղթականութիւնը պարտաւոր կըլլայ առաջի Աստուծոյ եւ Հայ որբերու եթէ հոգ չէ՞նտանին եւ այս խոստումը իրականացնել չի տան Պրն. Էջնայեանին, որուն համար գծուարութիւն մը չէ: Ամենէն առաջ եւ ամենէն աւելի ուրախ եզոյր մենք կըլլանք եւ տեսակ մ'ալ սրտի գոհունակութիւն ըզգալով որ մեզի չարիք հասցնելու նպատակաւ սկըսուած գործէ մը այսպիսի մեծ բարիք ծագեցաւ, որ հայ որբերու եւ ազգատ տղոց մէկ դասակարգին ճըմարտաօրհնութիւն մ'եղած կըլլայ, եւ որբերու դժբաղդ առեւանգումէն աւելի արժանաւոր գործ եւ մնայուն յիշատակ է՛նԱՅՆԱՅՆԱՅՆ անուան:

4001 1008 3632



ՔԱՐԻՉԻ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

ԵՆ

ՍՍԱՀԻՏՈՒ ԾՈՒՏԵՐԸ



Պրն . Արշակ Չոպանեան՝ այս ինդրոյ ասթիւ-
իր ճայնը լսել տալու առաջնութիւնը ունենալու փա-
փաքով , առանց խնդիրը լաւ մը քննելու , եւ սգե-
լութիւնը անկողմնակալ կերպով հասարակութեան
առջեւ գնելու արձա՞սթիւնը ունենալու , աճապա-
րանօք , եւ գուցէ չարութեամբ , զէպքը բոլորովին
խեղաթիւրելով Անահիտի Հօկու .— Նոյ , թիւերուն մէջ
ստակերու փոխիչ մը հրատարակած է , զորս կուզենք երե-
ւան հանել ներկայ յոյուածով :

1 . Պրն . Չոպանեան սուտ է թէ այն 18 ար-
դաքը բարից անձը կիրքիկի աստուտ գայնս Բարիզի
Հայկական մատուտը առաջնորդելով՝ հանգանակու-
թիւն մը բանալ ուղած ըլլայ , անոնց մընչեւ Լոն-
տոն ճամբու ծաղքը ճարելու համար : — Այ ճամ-
բու ծաղքի համար զացած են մատուտը , եւ ո՛չ այ
հանդանակութեան նկատմամբ ո եւ է թուք եղած է
մատուտին մէջ :

2. Անահիտ սուտ է թէ Պրն . Էդմանեան ար-
դաքը Բարիզ պահելու խորհուրդը Տէր Վոսաճապուհ
քահանայի Լոնտրոյէն իրկած աննպաստ լուրերուն
արդիւնքն եղած ըլլայ : — Ընդ հակասակն աղաքը Բա-
րիզ պահելու խորհուրդը յանձնախն Ինայթէն մեկ-
նելէն առաջ յրացուած նա անոր Լոնտրոյ կատարելիք
դործերէն մին եղած է :

3. Անահիտ սուտ է թէ աղաքը առաջնորդող
ա՛ճը Վիէննայի մէջ հանգանակութիւն բացուած ըլլայ :

— Վիէննա ոչ մէկ Հայէ կամ օտարազգիէ ստակ ուղուած
է : Հապա աղայոց առաջնորդը Թավրիզի Ծառուբխանէն
բերած եւ Պարսից զեպան Նարինան խանին յանձ-
նուելիք նկարներու ծրար մը ունենալով՝ գայն յանձ-
նած Ժամանակ կը խնդրէ նաեւ նորին մեծութեանէն
թէ արդեօք հնար մը կա՞յ կէս գնով տոմսակ ստա-
նալու Վիէննայի երկաթուղոյ ընկերութեան նա Խանը
իր կողմէն 100 Ֆրանք տալով նոցա ճանապարհածախ-
սին համար , յանձնարարական մ՛այ կուտայ երկաթուղ-
ւոյ ընկերութեան կէս գնով տոմսակ առնելու հա-
մար , որը սակայն անհետեւանք կը մնայ :

4. Անահիտը սուտ է թէ Ժընէվ ալ նոյն նպա-
տակաւ հանգանակութիւն բացուած ըլլայ : — Ժընէվ
ո՛չ ոք զացած եւ ստակ ուղած է : Այ մի Ժընէվցիէ կամ
Զուիցերիա ապրող Հայէ ստակ ստացուած է :

5. Անահիտը սուտ է երբ աղաքը քաղքէ քաղաք
քաշկրտուած կը ներկայացնէ : — Այլ միայն Զուիցե-
րացի բարեկամաց թեղազրութեամբ եւ նախաձեռնու-
թեամբ Զուիցերիա մի քանի օրեր հիւրասիրուած եւ
հանգչած են : Եւ այդ միջոցին մի քանի քաղաքներ
զացած են , ի մեծ ուրախութիւն աղայոց եւ հիւրա-
սիրողաց : Դեռ օդապարիկով ճամբորդութիւնը հնարա-
ւոր չ՛եղաւ որ առանց քաղաքներ հանդիպելու , տեղէ
տեղ փոխադրութիւն ըլլուի :

6. Անահիտը սուտ է թէ աղաքը ամեն տեղ մու-
րացկանի զիրքի վերածուած ըլլան : — Երբէք տեղ մը
աղայոց մուրացկանութիւն ընել արուած չէ : Ընդհա-
կառակն , իրենց տեղերը չատերք մուրացկանութեան
վիճակի մէջ գտնուելով՝ անկէ ազատած ենք զիրենք :

7. Անահիտը սուտ է թէ խնդիրը միջնորդութեամբ
լուծելու ինձի եղած առաջարկութիւնը մերժած ըլ-
լամ : — Այլ միայն առաջարկած եմ որ ես ալ երկու
Հայասէր Գաղղիացիներ ընտրեմ , քանի որ Բարիզի
մէջ ծանօթ Հայեր չունիմ : Սակայն այս առաջարկու-
թիւնն ալ անհետեւանք թողուեցաւ :

8. Սխալ հասկացողութեան մը արդիւնք ըլլալու է նաև այն լուրը թէ որբանոցիս տղոց մին իմ ծառաս եղած ըլլայ: Ես այսպիսի Հայ ծառայ ունեցած չեմ. բայց եթէ ունենամ իսկ, յանցանք կամ ամօթ է:

Մեր հին աշակերտաց ոմանց գանգատներուն եւ տրտունջներուն նկատմամբ վերջերս արտասահմանի թերթերուն մէջ հրատարակած յայտարարութիւնս կրկնել աւելորդ կը սեպեմ:

9. Սակայն Անահիտ սուտ է. երբ զանոնք իբր շահագործուած կամ ծառայի պէս գործածուած կը ներկայացնէ: Ճշմարտութիւնը ան է թէ մանաւանդ մենք իրենց ծառայեցինք 4—5 տարիներ, եթէ չահագործուած մը կայ, յաւէտ Պրն. Զօպանեանն է որ կը շահագործէ այդ խեղճ պատանիներուն անփորձութիւնը, զանոնք անխղճօրէն գրգռելով հետաքրքրական սուտեր հնարել եւ հաղորդել Անահիտին, առանց սակայն անոնց նիւթական եւ շօշափելի օգնութիւն մը մատուցանելու. եւ ոչ իսկ իմ մատուցածին մէկ հարիւրերորդին չափ:

10. Անահիտ կամ իրեն լրատուն սուտ է նաև, երբ կըսէ թէ անոնք Լոնտրայի փողոցները ձգուած ըլլան: Եթէ Պրն. Զօպանեան իրօք վերահասու է թէ այդ իր սիրելի թղթակիցները Լոնտրայի փողոցները ձգուած են անպաշտպան եւ ինքն ալ այնչափ գութ ունի անոնց վրայ, ինչու ուրեմն չի ջանար զոնէ անոնց մէկ յանիին լաւ տեղեր եւ գործեր հայթայթել: Այդ կերպով միայն եւ ոչ թէ չոր խօսքով եւ սուտերով իրաւունք կ'ունենայ Պրն. Զօպանեան քննադատելու մեզ, որ տպանեակներով Պատանիներ պատրաստած ենք ու գործի դրած: Դեռ անոնցմէ ոչ մէկը երբէք անտէր կամ անգործ որբանոցէս հեռացուած է: Ամենքն ալ իրենց տաղանդին եւ յարմարութեանը համեմատ գործի մը կամ արհեստի մը դրուած են: Իսկ եթէ յիմարութեամբ գործերնին կը ձգեն եւ

մեզ ալ անհնար կընեն իրենց օգնել, յանցանքը որունը կ'ըլլայ: Իբր նմոյշ անոնց ունեցած գործերուն մի քանին հոս յիշենք: Երկուքը շնորհիւ որբանոցիս մէջ ուսած Անգղիերէն գրաչարութեան Անգղիական սպարանները ընդունուած են եւ դն ահատուած: Մէկը Վաճառականի քով է: Ուրիշ մը Դեղագործի քով է: Մէկ ուրիշը զարդագիր ապակեգործի մը նոր սկսած մէկ ճիւղին մէջ դրուած է, որ եթէ խոհմութիւն եւ հաւատարմութիւն ցուցնէ, օր մը այդ ճիւղին պետր կրնայ ըլլալ: Մէկ մը Անգղիոյ կառավարութեան սիւլիլ ճիւղին (civil service) քննութիւնը որբանոցիս մէջ ըստացած կրթութեան շնորհիւ՝ յաջողութեամբ անցունելով՝ այսօր Լոնտրայի թղթատարութեան մէջ պատուաւոր պաշտօնեայ մըն է: Իր ընկերներէն շատերըն ալ նոյն բանը կրնան ընել եթէ ուզեն, բայց կ'երեւի թէ անոնք ալ իրենց գործերէն գոհ եւ շնորհակալ են որ այդպիսի բանի մը վրայ չեն խորհիր: Ասոր զրական ապացոյց՝ բաւական կը համարինք սա եւս աւելցնել որ, տակաւին վերջերս, կերակուրէն եւ բնակարանէն զատ՝ իրենց շարաթը 8—12 շիլ. զուտ դրամ խոստացող գործի մը առաջնորդեցինք զիրենք եւ յանձն չառին, անշուշտ ձեռքերնին անկէ աւելի շահաւոր եւ յոբօք գործեր ունենալուն համար, ոչ թէ անգործ ըլլալուն: Հատ մը զէնքի գործարանի մէջ «մեքսիսիտ» է: Մէկ ուրիշը ճարտարապետի մը քով է երեք չորս տարիէ ի վեր եւ գործով ու վարքով յարգուած երիտասարդ մը եղած է: Ասոնք ինչ խղճով Լոնտրայի փողոցները ձգուած կրնան ներկայացուիլ:



ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԹԷ

ՔԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ (*)



Ճիշդ այս պահուս ձեռքս անցնելով "Նոր Դարի" Յունվար. 16 համարը կը տեղեկանամ կորիւն Վարդապետի պաշտօնական գրութեանն ի մասին մեր որբերու Բարիկ առեւանգման խնդրոյն :

Չզեղով յարակից շատ մը կետէր, խնդրոյն կեդրոնական մասին անցնել կուզեմ :

Մեր հակառակորդք իրենց յափշտակութիւնը կարգարացնեն եղեր յենելով սա փաստին վրայ թէ մենք որբանոց չունինք : Սակայն զարմանալի է՞ այս որ 6 տարիէ ի վեր շարունակուող հաստատութիւն մը օրին մէկը ջլախառտօրին մէկին խելքին կուգայ չի կայ հրատարակել : Հակառակ տեղւոյն առաջնորդ Եպիսկոպոսին որոշակի կայ յայտարարելուն :

Բոլոր Անգլիաբնակ Հայեր եւ Անգղիայէն դուրս ալ գիտեն թէ որբանոցը գոյութիւն ունի թերթներու մէջ բարբաջելէն ինչ կելլէ, ով որ չի հաւատար թող գայ նայի կամ կոնտրաչի մէկ բարեկամին գրէ որ գայ նայի եւ լուր տայ : Ասկէ աւելի տղայական, անմտ, անիմաստ ստախոսութիւն կրնա՞յ ըլլալ : զոր ջրելու համար մամանակ խի վատնել չենք ուզեր :

Շեշտած մի ուրիշ կէտերնին ալ սա է թէ մենք շահագործող ենք եղեր : Ո՞վ ըստ իրենց, ի՞նչ են ճանչցան :

Անոր համար որ ելք որբերը մեզ մէ ուզեցին գովածակեցանք, եւ գոնէ անոնց ճանապարհածախսը ուզեցինք : Մի՞թէ երբ մէկը մէկէն բան մը կուզէ, եւ սա ալ ստոր համար եզամ ծախսը կը պահանջէ շահագործող կըլլայ : Մենք որբերու փոխադրութեան ածանա չենք, որ ուղողին համար

(*) Այս յօդուածը "Նոր Դարի" շաբաթ 16 համարը 1907 թ. հունվար 16-ին հրատարակուած է :

որբեր բերել տանք, ոչ ալ մեր գործը ուրիշներու համար ձրի գրեր բերել տալ է, այլ միայն մեր որբանոցին համար բերել տուած ենք : Եւ չէինք կրնար սասեց մեծ զոհողութեան Բարիկի քահանային կամ Պրն. Էդմանի յանձնել զանոնք : Արդ մենք ալ զոհողութիւնը բնակուողն ու թիւն ունեցանք, պայմանաւ որ անոնց ճանապարհածախսը վճարուի Բարիկի, Էդմանի, ոչ թէ քրտակնիս զննք ալ մեր որբանոցը որբերու պակասութիւնը լեցնենք : Եւ չ որբեր բերելով : Զարմանալի է որ մարդիկ կան որ այս բաներ հասկնալու գծուարութիւն ունին, ու այդպիսի պարզ ու սրինասար գործի մը մէջ շահագործութիւն կը տեսնեն : Արի ըստ ի մնաք մեզ կէլ, ոչ խնդալ կամ ցաւիլ անոնց հիւանդ երեսակայութեան վրայ :

2. Առջեւը Պարկաստանէն Եւ Կովկասէն որբեր բերելու մէջ կը կայանայ շահագործութիւնը : Ասկայն ինչ հիման վրայ կարելի է պնդել այդպիսի մի բան :

Եթէ մէկը միջոց ունի 18, 20 եւ աւելի որբեր, Հայաստանի խելճ ու կասոս որբեր պահելու, եւ յոջողի զայնա բերել կոնտրա անուցանել, պահել, միջին աստիճանի կըլլալով մը տալ անոնց եւ վերջն ալ համատ գործի մը գնել, ասիկայ շահագործութիւն կըլլայ : Ամէն խելքը գլխիսը եղող, ասողք բանի աէր անձինք, ամէն տղի եւ երկուս մէջ Զարբարձութեան կը կոչեն զայս, ինչո՞ւ մեր լեզուի մէջ շահագործութիւն կոչել, եւ երբէն ի վեր այդպէս կոչուած է :

Շատ զի բին բան է նախ թիփիլիս կամ էջմիածին կամ Բարիկ եւ մեծ մեծ ջարդել կամ գոտապարտել իր շահագործող որբերուն համար ձեռքէն եկածը բնագործ որբներու ի վնդ ուզածին կամ սպասածին պէս չընել եղեր, եւ ինչպիսի որ խելճէն ու կարտաները մնան անաէր, անպաշտպան : Այսպիսի արարքներու հեղինակները յայնմամ միայն իրաւունք

կունենան երբ իրենց չուրջը գտնուած բոլոր խնդճու-
թեանց կրօնան բաւել : Որչափ ժամանակ որ անո՛ց
չեն բաւեր , ին՞չ իրաւունք ունին իրենց չօգնած-
ները արգիլել որ ուրիշներէ օգնութիւն գտնեն կամ
անոնց օգնողները շահագործող կոչել :

Ինչ խզճով կամ սրտով մէկը կրնայ արգիլուելի
որ հետեւեալ նամակին ակնարկած տղուն ձեռք չի
կարկառենք կամ երբ կարկառէնք ինչո՞ւ շահագոր-
ծող եղած կըլլանք : Հայրը 30 տարի հասարակական
գործով զբաղուած է , բանտարկուած եւ 600 դաւա-
զանի հարուած ընդունած է , եւ երբ երկրորդ անգամ
մատնուած էր անցաւ Րուսիա (եւ ի բացակայութեան
մահուան դատապարտուեցաւ) , ձգելով իր զերդաստանը
«անօթի եւ մերկ» իր իսկ բառերով , իր տասը տարե-
կան աղջիկը թիւրքերը գերի տանիլ ուղեցին , բայց
մայրը ճար մը գտած փախուցուցած է :

Ահաւասիկ այսպիսի թշուառ հօր մը իր դժ-
բաղը տղուն նկատմամբ գրած աղերսագրերը

"Ձաւակիս գաստիարակութիւն տալու փափագ
ունիմ , բայց միջոց չունիմ , կը խնդրեմ Ձեզմէ եթէ
հնար է , բացատարար բնորունիք իմ որդիս որբերու
կտրզին եւ կրթէք իրբեւ Ձեր զաւակը . . . : . . կրբ-
կին կը խնդրեմ չի մերժէք իմ այս առաջարկութիւ-
նը" :

Այս հայրը թիֆլիսէն ոչ շատ հեռու կը բնա-
կի , ինչու այս եւ ասոր նմաններու չօգնուիլը հոտ եւ
օգնողները շահագործող կ'անուանուին : Ինչ իրա-
ւամբ , Հիմա այդ տղան մեր որբանոցն է Բարիզի ա-
ռեւանդիկներէն ազատուած , որոնք անխզճօրէն Փու-
մանան որբանոց չիկայ կը պուան :

3. Միթէ որբերու ճանապարհածախսէն մէկ
մասը ճամբան հաւաքուած ըլլալուն համար : Բայց
այդ պարագան արդէն յայտնի էր , էրբ մեր ներկա-
յացուցիչը Կորին Վարդապետին եւ Վեհ . կաթողիկո-

սին ներկայաւաւ , եւ անոր յանձնարարական թղթե-
րուն վրայ այդպէս գրուած էր : Բաց աստի վեհարա-
նէն իրեն տրուած յանձնարարական նաւ զայդ կը
հաստատել . ինչու ուրեմն այս յանկարծական փո-
փոխութիւնը : Կերեւի թէ առատ նուիրատուութիւն-
ներով այդ ճանապարհածախսը քանի մը անգամ ժող-
վուելաւ կը կարծէին , անգամ մը Վլատիկաւկաս (ուր
մինչեւ իսկ զացած այ չեն) անգամ մը Րասթով , ան-
գամ մը Վիէննա եւ այլն եւ այլն , ինչպէս իրօք այ հաս-
կցնել կուզէն : Աս ին՞չ առատաձեռնութիւն է : Եթէ
այդ էր վախերնին , կրնային ստուգել կամ սպասել
մինչեւ որ հաշիւները դրիուին նուիրատուներուն (տես
գրքոյկիս 3, 4, 5 էջերը) : Եթէ այդպէս ըրած ըլլա-
յին պիտի տեսնէին թէ Վլատիկաւկաս նոյն իսկ գա-
ցած ալ չեն , Րաստով 210 եւ 50 բուպ , Վիէննա ալ 100
ֆր . ստացուած է միայն :

Մենք այս անիմաստ աննպատակ վէճերը կը ձը-
ղենք անոնց որ իրարու դէմ ունեցած հաշիւները մաք-
րելու այսպիսի առիթներ կը փնտռեն , կամ կը փա-
փազին ծայրագոյնութեան հասնիլ եւ կամ ուրիշին
բերել առած որբերով որբանոցի մը հսկողութիւնը
ստանձնելու յաւակնութիւնը ունին , իսկ մենք կը
շարունակենք մեր որբանոցը ի հեճուկս Բարիզի քա-
հանային պաշտօնական պոչաւոր սուտերուն : Հասարա
կութեան կը մնայ կամ այդ սուտերուն հաւատալ եւ
կամ իրականութեան :



ՎԵՐՋԻՆ ՊԱՐՉ ԽՅՄԲ (*)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մշակի Յունի. 19 համարով Մ. ստորագրու-
 թամբ գրով թիւն մը լոյս տեսաւ, Վարիզ յափշտակուած
 մեր որդերու խնդրոյն վրայ, որուն մէջ յօդուածագի-
 րը կ'սպասնայ այս խնդրոյ առթիւ գրուած նամակ-
 ները, վատառիւթներն ու հետագիւրծներն ալ հրատա-
 լակելի ։ Մշակը շատ ուշ ձեռք բերեալ հասնելով,
 սիրէն պատասխանել կը փութանք կը վատահասցնենք
 զինք որ, այդպիսի հրատարակութենէ մը առնէն ա-
 լելի գո՞ մնացող մենք պիտի լլլանք, քանի որ մեր
 բոլոր թղթերուն ու նամակներուն մէջ միայն ուղղու-
 թիւն եւ անկեղծութիւն կը բարեւ ինչորոշ գարշա-
 հատութիւնը ուրիշ կողմերէ կուգայ, եւ ի՞նչ օգուտ-
 ծայրերը սուր հաստութիւն ու անկողմնակալ ողի ու-
 նի, զինք կը խրատենք Վարիզ գործած կեդոտու-
 թիւնները երեսն հանել։ Մենք մեր գործին տէրն ենք,
 ապա ու կամ քաջուելու բան մը չունինք։ Արբանոց
 մը բայեր, անտէր, անպատասխար, անտես անուած որ-
 րքը ընդունելով կը պատասխարենք կը մուսանենք,
 կը գրենք ու համեստ գործի մը կը գնենք եզեր-
 ներանի թէ գուց ալ կատող բլլայիք այդպիսի մի բան
 ընել եւ մեզմէ լա ընել։ Եթէ մեր կե պը շահագոր-
 ծուծով ընել է, հա՛մա գուց չի շահագործած ընելու
 երարը պիտէք, այ՛պէս բրէք մենք ի սրտէ ուրախա-
 կից պիտի բլլանք, եւ ձեր ոչկեղծած որդերն ալ հարկաւ
 մերիններէն աւելի երախտապարտ վերաբերում մը պի-
 տի ունենն ան զէ պի ձեզ, քանի որ լուրջովին անշահա-
 խնդիր պիտի բլլայ։ Ապիկայ մեր բրածը քննադատելէն
 աւելի լա եւ օգտակար գործ մը պիտի բլլար, բայց մին-
 չն որ այդպիսի մի բան չընէք, ձրի քննադատեալ ու ի-
 բաւանք չունիք մեր բրածը, ոչ ալ կատկածելու մեր

(*) Այս ստորագրուած Մշակի շնորհած է հրատարակութեան համար։

բարի նպատակաց վրայ ու շահագործող կոչել այնպիսի
 մէկը՝ որուն անցեալ գործունէութիւնը թէ ի՞նչ ար-
 քիա եւ թէ յԱնդգիւր գուց ալ անձամբ կը գովէք։
 Մի նմանիք այն պոռոտախօս Պարոններուն,
 որոնք հարիւրաւոր գուցէ հազարաւոր, անպատասխար
 Հայ աղաքներ կը ձգեն թափառական չըջելով Հայ-
 բնիքի մէջ կորսուելի իրենց շուքը ։ Բայց երբ ա-
 նոնցմէ մի քանին պաշտպանելու, մահէ, կորուս-
 տէ ազատելու միջոց մը գտնէ մէկը, իսկոյն շա-
 հագործում կը պոտան, արդելք կը քարուցանեն, իսր
 տեսութիւններ, փայլուն ծրագիրներ, երկայն ու սու-
 նախրութիւններ կը հրատարակեն, որքին օգնողնե-
 րը սանկ ընելու են, նանկ ընելու են կը քարոզին,
 անոնց տրուած կամ տրուելիք սնունդին, եւ կըր-
 թութեան շփն ու տեսակը կ'որոշեն, առանց սակայն
 որքեւուն իսկապէս օգուտ մը ընելու հոգը կամ կա-
 րողութիւնը ունենալու, նման առածին որ կըսէ
 «որքին խրատ սուտոզ շատ կ'ըլլայ բայց հաց սու-
 ող է'ըլլար»։ Ասոր մի օրինակը գուտային մեզի քանի մը
 շարաթ առաջ ծիւրիւթի մի քանի Հայեր, որ մեր
 որդերուն հանդիպելով հոն, կը գանգատէին թէ
 ի՞նչու որդերը աւելի պատուաւոր եւ մաքուր հիւ-
 րանոց մը չէինք իջուցած, իբր թէ ծաղբը իրենք կու-
 տային, եւ սակայն անոնց գոնէ տաք ապուր մը
 կամ խաճուէ մը խմցնել մաքերնէն իսկ չէր ան-
 ցներ, թէ եւ կրնային կենալ ու աչքովին տես-
 նել ապուրին կամ խաճուէին որդերուն կոկորդէն
 վար իջնելը եւ մեր շահագործելու վախէն ազատ
 կ'ըլլային։ Այս պարոնները կը յայտարարէին տի-
 բարար, իբր թէ որդերը կամ անոնց խնամակալ-
 ները կամ քերնին իրենց ձեռքը յանձնած են թէ "ա-
 լելի լա է որ որդերը Հայերնիքը մեան ու մեռնին,
 կորսուին քան թէ Եւրոպայ բերուին", հարկաւ քանի
 որ այս պարոններուն մեան մը չկայ։ Երանի թէ այս
 խրատը ուրիշներուն ապէն առաջ իրենք իրենց
 սուտ ու անօր հետեւած ըլլային։

Պարոն Յողուածազիր, մեզի գէմ ելլելով եւ որբերու նկատմամբ մեր գործունէութիւնը չի հաւնելով, պախարակելով ինչ ըսել կուզէք, կամ մեր շահագործութիւնը ուր է կրկարծէք: Ըսել կուզէք թէ Հայրենիքի մէջ խեղճ ու օգնութեան կարօտ տղաք մնացած չեն, հետեւարար անոնցմով զբաղիլ շահագործում մըն է: Եթէ այդ է ձեր պնդածը Հայրենիքի ընդարձակ թեմերուն մէջ, ինչպէս եւ Պարսկաստան անտես ձգուած որբերու եւ կարօտ տղոց երամը բաւական է ձեզ եւ ձեր նմանները գատապարտելու:

Ըսել կուզէք թէ տեղական միջոցներով ամենուն ալ կրնաք բաւել, եւ իրօք ամենքն ալ պատրաստուած են առանց Եւրոպայէն օգնուելու պէտք ունենալու: Եթէ այդ է միտքերնիդ, Պարոն, հաճեցէք ինքզինքնիդ յայտնել, անուանիք եւ հասցէնիդ շնորհել որպէսզի յետ այսորիկ մեզի դիմող եւ աղբւսողները ձեզի դրկնէք, եւ պատասխանատուութենէ ազատուելով գոնէ խղճերնիս հանդարտի:

Մի գուցէ ըսել կուզէք որ Եւրոպայէն օգնութեան կարօտութիւն կայ, բայց թէ տղայք Եւրոպա տանելը, պէտք չ'է, այլ օգնութիւնը Հայրենիքի մէջ ըլլալու է: Կրնաք եւ ազատ էք արդարեւ այդպէս խորհիլ, ինչպէս մենք ալ Ձեզի չափ իրատունք ունինք ուրիշ կերպ կամ ատոր հակառակ խորհելու: Բաց աստի, եթէ օգնութիւնը Հայրենիքի դրկուի, բենք թէ Ձեզի դրկուի, մատակարարելու համար, ինչպէս պիտի յաջողիք համոզել թէ դուք կամ ուրիշները պիտի չի շահագործէք առդաքը մեզի պէս, եւ Անպղիպցի նուիրատուներ ինչպէս կրնան Ձեզ հետեւիլ այսչափ հետու և օտար երկրի մը մէջ: Դուք մեզմէ լաւ գիտնալու էք թէ ինչ զեղծումներ կը գործուին վանքերու, եկեղեցիներու, դպրոցներու եկամուտներու մատակարարութեան մէջ, որոնց շատերուն համար հաշիւ տալ առնել ալ չիկայ, Մինչդեռ հոս ամեն տարի որբանոցիս մուտքին եւ ելքին կանոնաւոր հաշիւը կը

հրատարակուի, արտօնացեալ հաշուէքննիչի մը բովէն անցած եւ քովթէն վաւերացած, որով ամեն նուիրատու իր նուէրին ընդունուիլը կրնայ զիրաւստուզել, եւ որբանոցնիս ալ այցելելով, անձամբ կամ բարեկամաց միջոցաւ, կրնայ անոր գոյութեան եւ մատալարարութեան կերպին չ'բայ համոզում մը գոյացնել, առանց պէտք ունենալու որ, Հայաստանէն կամ Բարիզէն լուր տան իրեն թէ իր երկրին մէջ իր մօտը գտնուած որբանոցը գոյութիւն չունի:

Արդեօք ըսել կուզէք թէ որբեր որդեգրելու գողը նախ թեմին առաջնորդին դիմել եւ անոր հաւանութիւնը առնելով սիրտը շինելու է: Այդպէս ալ ըրած ենք: Ծուրը գլխէն խմելու համար նախ վեհ. Կաթողիկոսին հաւանութիւնը եւ օրհնութիւնը ստանալով նորա յանձնարարութեամբ ներկայացանք Ատրպատականի Առաջնորդ Վարդապետին որ աջակցի եւ օգնէ, ինչպէս որ հրամայած է Ն. Վեհ. Ա. օծութիւնը: Իսկ յարգելի Վարդապետը պատուարեր զեր մը չի խաղաց այս գործին մէջ, վարպետութեամբ յանձնարարականները քովը պահեց, (Բարիզի առեւանդիչ խմբակին ըրածին պէս), եւ երբ այդ թղթերը ուզուեցան իրմէ, վաղն առտու եկէք առէք ըսելով վրայէն նետեց եւ առանց կարգադրութիւն մ'ընելու դիշերը աճապարանօք մեկնեցաւ Դալլէմէն, Եպիսկոպոսութեան կոչման հետեւելով: Ահա այս թղթերն են որ հրատարակել կսպառնան: Երանի թէ հրատարակին, քանզի իրենց դատապարտութիւնը կը հրատարակեն: Միայն անցողակի դիտել կուտանք թէ զարմանալի զուգարկութիւն մըն է որով Բարիզի քահանային ծայրագոյնութիւն եւ Եւրոպայի առաջնորդութիւնը ստանալու եւ Մուրատեանի Եպիսկոպոսանալու փափաքները մեր որբերուն խնդրոյն մէջ, չսպասուած զեր մը կը խաղան:

Արդեօք անոր համար շահագործող կը համարիք զմեզ որովհետեւ մենք, հարուստ չենք, մեր անձնական ստակով հոգալու որբերը, ալ ուրիշներէ բարեկամներէ կը հաւաքենք պէտք եղած ծախսը: Ըսել կու-

զէք թէ միայն իր քսակէն, իր հաշուով բարիք ընողը բարեբար է եւ ուրիշներ պարզ շահագործողք եւն: Այս եւնթագրութեամբ բարեգործութեանց մեծ մաս մը կ'ը դատապարտէք: Եւ բողոքի մէջ ծանօթ մեծ ու փոքր բարեգործական հաստատութեանց մեծագոյն մասը, ուրիշներէն հաւաքուած ողորմութիւններով, նուէրներով կը պահուին, եւ սակայն Եւրոպացիք այդ հաստատութեանց հիմնարկողները շահագործող չեն նկատեր. այլ օրհնութեամբ կը յիշեն զանոնք: Բարեգործութեան համար ստակ գտնել, հաւաքելը քսակէն տալէն դժուար եւ աւելի մեծ գործ է:

Ի մասնաւորի վերջին աղէտներէն ՚ի վեր Հայոցս մէջ գարծող, թէ գաղթականաց եւ թէ որբերու համար աշխատող եւ անոնց օգնողներուն մէջ հազիւ կը գրտնուին այնպիսիք, որոնք իրենց անձնական զբամով գործած են: Գարդերէն անմիջապէս վերջը Հայրենիքի աւերակները այցելելով հարիւրաւորներու կեանք եւ հոգիները շոգ, հարիւրաւոր որբեր ապաստանարաններու մէջ հաւաքելով որբանոցներու հիմնող Քէյմպրիձի մեծ պրօֆէսոր Ռէնտըլ Հարիս ոչ իր ճամբորդութիւնը անձնական ստակով բրտ, ոչ ալ պատասխարած որբերը քսակէն հոգաց եւ կը հոգայ, մենք զիտենք թէ ուրիշ արուեստ այդ ծախքը: Բայց անով անոր ըրածին արժէքը ոչ թէ կը նուազի այլ կ'աւելնայ:

Կարծէր որ այս կէտը հիմնովին ուսումնասիրուէր եւ գուցէ պիտի տեսնուէր թէ այս սեռակ, հաւաքական նուէրներով եղած բարեգործութեանց պակասութիւնն է մէկը այն պատճառներէն որուն համար մեր մէջ (արեւելքի մէջ), բարեգործական ձեռնարկներ միայն մեծ քսակներու վերապահուած եւ հարուստին մենաշնորհը նկատուելով, շահագործութիւն խրտուէն սկէն, բարեստող, շրպարտող լեզուէն եւ գրիչէն վարնալով, կազմակերպելու ստաջնորդելու կարող անձնաւորութիւններ երեւան չեն ելլեր այսպիսի գործերու մէջ նախաձեռնութիւն ունենալու, այլ միայն

հարուստին ներշնչումէն, կամ խաղցին քանձածոյքէն կապանք ամեն բարիք, արեւելեան զանգաղկու ստութեամբ:

Կերևի թէ իմ գործունէութիւնս շահագործութիւն համարելուց միակ պարզապէս նկատուող մէջ ուրիշ պաշտօն կամ գործ չունենալու նկատած էք, որմէ հետեւցուցեր թէ "որբերով ապրել եւ նրանց շահագործել եմ": Սակայն ստիկայ ալ արամարանական չէ, եթէ միեւնոյն ժամանակ ուրիշ գործ ընէ որբերով գրազելու ժամանակ չէի գտներ, ինչպէս որ գուք ալ ուրիշ գործ ունենալով բնականաբար միջոց չունիք որբերով գրազելու, որը Ձեզի համար յանցանք մը չէ, ինչպէս որ իմ ալ որբերով գրազելու շահագործում նկատել եւ հրատարակելից ա՛նկուտութիւն եւ անիրաւութիւն է:

Մաքերնից պարզապէս ի՞նչ է, բնել կ'ուզէք թէ բարեգործական հաստատութեան մը գլուխ գրտնուող ո՛ր եւ է մէկը պարտի անպատճառ ճրի պաշտեն վարել կամ սպրուստը ուրիշ կերպով ճաշել, որպէսզի շահագործող չի նկատուի: Այդ համոզմամբ որբանոցներու հիւանդանոցներու ինամակայներն տեսուցներ, բա Ձեզ միայն կամաւորներ բլլալու էին, մինչ Եւրոպիոյ մէջ վճարեալներ եւ լաւ վճարեալներ կ'ենն, որպէսզի բոլոր ժամանակին ու խորհուրդին գործին նուիրելով յառաջ մղեն զայն: Ըսել կ'ուզէք որ վարժապետ մը եթէ վաճառակաւութեամբ կամ գրապրութեամբ իր ազգուստը զի ճարեր շահագործող մըն է, թէ ստաջնորդ մը, զորօրինակ Սարգստականի ստաջնորդ Արմ. Ե. վա գապեա Մուրատեան, պէտք է երթալ գործով մը սպրուստը ճարէ եւ իր թիւէն բան մը չի պահանջէ շատանայ, ապա թէ ոչ իր թիւմը շահագործող կը լլալ:

Ձէք տեսներ թէ ստով ըստոր Հայ կղերական կանոններ վերէն վար իրբեւ շահագործող կը

դատապարտէք որովհետեւ իրենց ապրուստը գործելով չեն ճարեր. հապա ժողովրդեան նուէրով կը հոգան: Ձեր տեսակէտով ամեն հասարակական մարդ շահագործող կըլլայ, կամ այն գործը ընտրած կըլլայ սրովհետեւ ուրիշ պաշտօն չունի, ուրիշ գործ չի կրնար ընել:

Սակայն, Պրն Մ. խնդիրը Ձեր կարծածին պէս չէ: Քանի որ խնդրոյն գեհնիկ կողմերը մտաք եւ անձնական արժանապատուութեան դպար, կուզեմ որ գիտնաք թէ Թուսայիան որբերով զբաղելով ոչ թէ կը շահագործէ այլ մեծ գոհողութիւն մը կընէ: Դուք հաւանական է թէ Ձեր արդի գործէն զատ ուրիշ գործ մը չէք կրնար ընել: Եթէ, զորօրինակ, թեմի մը ստաջնորդ էք եւ Ձեր վեղարը առնուի, հաւանակաւորաբար ուրիշ գործի չի գալով անօթի ու խեղճ կը մնաք, եթէ ժողովուրդը շահագործելով բաւական գրամօրիցո՞ չէք մինչեւ այն ատեն: Մինչդեռ ես, եթէ այս գործը ձգեմ (չոր ինձի եղած Աստուածային կոչում մը նկատելով ձղել ուզած չեմ, հակառակ աղագականաց եւ բարեկամաց թխտանձոնքին եւ թշնամեաց բարբառնջանքին), մէկէն աւելի գործեր կան որ կրնամ յաջողութեամբ ընել եւ հանդիստ կեանք մը վարել: Քանի որ բաւական թուով երիտասարդներ գոյժի տէր րբած եմ, եւ անոնցմէ ոմանք պատուաւոր գործի մէջ են, արդեօք չնորհիւ այսչափ Անգղիացի բարեկամաց ինձի համար գործ պիտի չի գտնեմ, երբ անգամ մը որոշեմ այլ եւս ինձի համար ապրիւր 1893 ին երբ նախախնամութիւնը զիս Անգղիա նետեց, ուր, Փաղատիոյ գատին հետեւանօք եւ տիկնոջս ազգեցիկ գործունէութեամբ ու Մը. կլասթոնի միջամտութեամբ կախաղանէն ու Սուլթանի ճիրաններէն ազատելու պատճառաւ, Թուսեան աւուունը հանրածանօթ բուն մըն էր պետական շրջանակներէն սկսեալ, փոխանակ ատիկայ իմ անձնական շահու գործածելով, ինձի անկախ գործ մը, շահ մը,

պաշտօն չինելու, զայն ու զիս Հայկական դատին նուիրեր եմ, միթիւնկներ կազմելով, ատենախօսութիւններ ընելով, մեր վէրքերէն զատ անոր դարձանը, մեր բուն պահանջը փաստերով ներկայացնելով՝ մեր դատը Անգղիացեաց ծանօթացողներ ու պաշտպաններ եմ: Ոչ միայն ես ըրած եմ զայդ, այլ Ձուիցերացի տիկնոջս ալ այնպիսի թունդ հարկնասիրական ոգի մը ներշնչել յաջողած եմ, որուն նման գործով Հայասէր կին մը հազիւ թէ գտնուի, եւ որուն ազգեցութեան չափը Սուլթանի պալատին ազգած ատելութեանէն կրնայ չափուիլ: Աւար հետ մէկ տեղ յաջողեր եմ նաեւ 10—20 կարօս ու Հայրենիքի մէջ Ձեր անգործ, անտէր երեսի վրայ ձգած Հայ որբեր պահել Անգղիոյ մէջ, անոնց կրթութիւն տալ եւ վերջն ալ համեստ գործի մը առաջնորդել: Եթէ դուք ստիկայ շահագործութիւն կը կոչէք, հոգ չէ, ինձի կը մնայ մաղթել որ այսպիսիներուն թիւը շատնար. իմ այս կարծեցեալ շահագործութեամբ գոնէ կարգ մը որբեր ու կարօտներ կ'օգտուին, մինչդեռ Ձեր ու Ձեզի պէսներու պոռոտախօսութեամբ դեռ որբեր բան մը չի տեսան ու երբէք տեսնելիք ալ չունին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ



Պիտի չի ծանրանամ այն ատեն սոսապելախանն զրոյցներու վրայ որ Մ. ուրիշներու ռօածներէն քաղելով կրնիչէ, որպիսիք են Բարիզի քահանային տեղեկագրելը թէ Լոնտրա որբանոց, իմբազրատուն գոյութիւն չունին, թէ որբերը կորսուեր կամ փոզոցները ձգուեր են թէ էգնայեանը ոգեւորուեր է որբերը որդեգրելու, թէ մենք սրբերը սուներու առաջ երգել ե փող վասակելու համար կը զրկենք եղեր, եւայլն եւայլն, այլ միայն անոնց ինչ հրէշային մտութիւններ բլլալը մասնաւորելով պիտի անցնիմ:

1. Բարիզի քահանային մեր որբանոցին գոյութիւն

նը ուրանալը զարմանալի թեթեւամտութիւն մըն է, որուն ստութիւնը թեմական եպիսկոպոս Գեր . Իւթիւ-ճեան երեւան հանած է, իր առ Ա . Կաթողիկոս զրած նամակով, (ինչպէս կը տեղեկագրէ մեզ Կորիւն վար-գապետ Նոր Գարի մէջ : Գեր . Իւթիւճեան շատ ան-գամներ Անգղիա եկած եւ ազգայնոց մէջ մտած ելած ըլլալով աւելի լաւ գիտէ եւ գիտնալու գիւրութիւններ ունի քան թէ Բարիզի քահանան, որ միայն անգամ մը եկած է եւ մեր դժգոհներու յայտնի խմբակին հետ յա-րաբերութեան մտած կամ իր տեղեկութիւնները քա-ղած է իր ազգականէն եւ բարեկամէն որոնք իրենց որ-բերը մեր որբանոց ընդունուիլ առաջարկած էին ու-չընդունելնուս համար բնականաբար լաւ վկայութիւն պիտի չի տային, եւ որոնց այդ առաջարկութիւնը սա-կայն ուրիշ զօրաւոր ապացոյց մըն է թէ մեր որբա-նոցի գոյութեան եւ թէ Բարիզի քահանային թեթե-ւամտութեան եւ կեղծութեան :

Բաց աստի այդ չնորհալի քահանան ինքը Բարիզ յափշտակել տուած որբերէն 2 անգամ 4 ական որ-բեր մեզ յանձնելով հանդիսաւոր կերպով կը վաւերա-ցնէ մեր որբանոցի գոյութիւնը, որ անընդհատ կը շարունակէ 1897էն ի վեր : Եթէ մեր որբանոց չունենա-լը գիտէր այդ քահանան, ուրեմն ու՞ր եւ որո՞ւ յանձ-նեց այդ որբերը . եթէ մեր շահագործող ըլլալը գի-տէր, ինչո՞ւ մեզ յանձնեց զանոնք : Քահանային մեզ յանձնած տղոց մէջ 2 հատ կան որ վեհ . Կաթողիկոսի մեզ տուած Երն մէջն են, արդ եթէ վեհափառը իր որ-բերը քահանային յանձնեց ինչո՞ւ առիկա չի պահելով մեզ կը զրկէ : Անոնցմէ մին քանիցս խնդրած է հրա-ման առ իր էջմիածին գրեւով ցուցնէ եւ ապացուցա-նէ որբանոցի գոյութիւնը, բայց մենք առ այժմ թող չի տուինք, որ մի գուցէ շահագործութենէ վախցողներ կրկին շահագործութիւն աղաղակեն :

2. Զարմանալին Բարիզի քահանային Լոնտրա Պատանիի խմբագրատուն փնտռել ու չի գտնելն է : Ենդճը կերեւի թէ այսպիսի փնտռութիւններու անվարժ ըլ-

լալով խմբագրատուն անու՞ով զատ եւ մասնաւոր կա-ռուցուած չէնք մը կը փնտռէր . նման Թայմզի, Ա-թէնտարտի խմբագրատանց : Երբ Պատանին ամէն ամիս կը հրատարակուի, տղայութիւն չէ՞ Բարիզի քահանա-յին պնդելը թէ խմբագրատուն չիկայ Լոնտրա : Իսկ այդ տղայութեան հաւատացողներուն շիտակը չենք գի-տեր ի՞նչ անուն տանք :

3. Նախկին որբերը վաճառած կամ փողոցները ձը-գած չըլլալնիս քանիցս ապացուցած ըլլալով, միայն սա կրեսնք որ, երբ ամեն միջոց գործածելով զանոնք զգաստութեան բերել չի յաջողեցանք, անոնց ամեն-քին ալ իրենց արժանիքին եւ կարողութեան հա-մեմատ գործեր գտանք ու զետեղեցինք, այնպիսի գործեր զորս ունենալ բազմ պիտի համարէին եւ չը-նորհակալ ըլլային իրենց նման հաղարաւոր Հայ-պատանիներ : (Այս մասին աւելի ընդարձակ տեղե-կութիւն ստանալու համար գիմել գրքոյկիս 20 րդ . էջ հատուած 10 ըզին) :

4 Պոչաւոր սուտ մըն է թէ որբանոցիս տղաքները կը զրկենք եղեր տներու առաջ երգելով ստակ վաստկիլ : Բացարձակապէս կը հերքեմ զայդ : Յիրաւի սկիզբները, դեռ լաւ չի վարժուած անոնց մեծամիտ բնաւորութեան, երբեմն Հայկական միթիւնկներու տա-րած եմ հետս անոնցմէ ոմանք, որպէս զի սրտերնին բազուի Հայաստէր-երու բազմութիւն տեսնելով, եւ որ-պէս զի բարեկամք ալ ուրախ ըլլան, տեսնելով այն տղոցմէ ոմանք, որոնց կրթութեանը կօդնեն. բան մը որ խիստ բնական եւ անմեղ է մանուաւոր Անգղիա : Բայց երբ տեսայ թէ մեր արեւելեան տղաք, իրենց եղած այդպիսի պատիւ մը գնահատելու կարողութիւն չունին, վերջին 2 տարուան մէջ դրեթէ տարած չեմ, եւ որոչած եմ բնաւ չի տանիլ : Բայց խնդիրը տղոց այդպիսի բան մը ըսելուն կամ չըսելուն մէջ չէ, այլ խելքը գլուխը մէկուն այդպիսի բաներու հաւատա-լուն մէջ է : Ասոնք չեն հասկնար թէ դժգոհ մը միշտ

բան մը պիտի գտնէ ըսելու կամ գանդատելու: Մի-
թինկներու որ տանիս, տանելուդ կը գանդատին,
եթէ չի տանիս, յայնժամ ալ չի տանելուդ պիտի գտն-
գատին, ինչպէս որ կը գանդատէին ալ երբեմն երբ
չի տարուէին:

Ճ. Թէ գործը գատարանին ինկած է, անոնք
թող ամէնան որ հոն տարին զայն: Երբ մէկը քեզ
կը յափշտակէ ու հակառակ ամէն զիջումներուդ չես
կրնար համոզել որ յափշտակուածը ես գարձուի,
ի՞նչ կընես: Էզնայեան կամ Բարիզի քահանան որ-
բերը յափշտակեցին մեր ձեռքէն, մեր ամեն զի-
մու մները, զիջումները եւ ձեռք առած խաղաղասիրա-
կան միջոցները ապարդիւն ելլելէն վերջը մեր զի-
մելիք միակ տեղը գատարանն էր:

Հոս ալ կրկին Բարիզի խմբակը խիղճ չըբու-
հրատարակել թէ մենք Էզնայեանի որը որդեգրե-
լուն կը հակառակինք, թէ գատարանի միջոցաւ անոր
որբերը ձեռքէն առնել կուզենք: Մինչդեռ մենք Էզ-
նայեանի ոչ թէ որբ որբ էրքէրէլ ալ մեր բերած
որբերը յախրակէլու ղէմ ենք. ոչ թէ մէկ անոր որ-
բերը առնել կուզենք, ալ անոր մեզմէ յափշտա-
կած որբերը եւ կը պահանջենք:

Քանիցս հրատարակեցինք թէ մենք ամեն զի-
ջում բրինք որբերը իրեն յանձնելու, եթէ անոնց
համար եղած ճանապարհածախար վճարէ, որպէսզի հը-
նարաւորութիւն ունենանք անոնց տեղ նոր որբեր
բերել ալ, որոնց տանեակներուն ազաջանքը ան-
լսելի ընելով, տեղերնին թողով ոտխալուած էինք:
Ըսինք իրենք թէ դեռ հաշիւները տեսած չենք (չա-
նի որ ազաքը դեռ ճամբան են) բայց 6 եւ 7 հազար
Ֆրանքի մէջ տեղերը պիտի ըլլայ: Մինչև անգամ
վերջերս՝ գործը հաշուութեամբ վերջացնելու փափա-
ով իրենց առաջարկեցինք որ, եթէ մեր ըսած գու-
մարը չափազանց կը թուի իրենց, երթան ճամբոր-
դութեան ամսակ վաճառող ընկերութեան մը հար-

ցնեն եւ Պարսկաստանէ մինչև Բարիզ ամենէն կարճ
եւ ամենէն աժան ճամբով ինչ ծախս որ կ'երթայ
19 հոգւոյ համար, զայն վճարեն, ու կրկին չի կր-
ղինք համոզել: Քանզի մտքերնին ոչ թէ շատ կամ քիչ
վճարելու վրայ կը դառնար, այլ ի՞նչ աւ բան մը չի
վճարելով, որբերը վար դնելու վրայ:

Ինչէ մանք խորհին թէ ինչու հոգարարութեան
չի դիմելով գատարանը ինկանք: Անոր համար որ Հո-
գարարութեան նախագահը ինքը, Պրն. Էզնայեանն է,
յափշտակիչը եւ, քանի որ յանխաւէս իրեն եւ իր ազ-
գականաց զիմեցինք ու մերժում գտանք, ինչ վատա-
հութեամբ կրնայինք իր նախագահութեան տակ
գտնուած հոգարարութեան դիմել: Ասիկայ պիտի բլ-
լար մեծագոյն յիմարութիւնը, Էզնայեան խմբակի ա-
պօրինաւոր մի արարքը ժողովքին վաւերացնել տալով:

6. Ի՞նչ եղաւ գատին արդիւնքը:

Հոս ալ կրկին ստուծիւնով ողողեցին հրապա-
րակը: Հրատարակեցին թէ գատարանը գատապարտեց
Թումանեանը, թէ որբերը առաւ ձեռքէն եւ քահանային
յանձնեց եւայլն եւայլն:

Արդ ասոնցմէ ոչ մին տեղի ունեցաւ, ալ պար-
զապէս սա որ, ես գրեցի գատարանին թէ գատէն ես կը
կրնամ եւ խնդրեցի որ չեղեալ համարի զայն: Դա-
տաւորն ալ պարզապէս հատատեց իմ խնդիրը: Դա-
տաւորին գրած նամակս այս էր:

«Նկատելով որ վեհ. կաթողիկոսը իր 6 որբերը Բարիզէ
Քահանային կը յանձնէ կրնէ, որով անոնց պարտախանութեան
թիւնը վրայեւ կը վերնայ, եւ նկատելով թէ անոնք որ հակա-
ռակորդներն են՝ ինչպէս յախրակած որբերէն 2 անգամ 4 ակտ որբ
իրենց կամով ինչպէս յանձնելով հանդիսաւոր կերպով լծարանե-
ցին եւ հաշիւեցին ի՞նչ պարտաւոր մէկն ըլլաւ եւ Լանդայի
մէջ որբանոց ունենալու, անոր համար այլ եւ գաղթ արտա-
նակելու հարկ չէ՞ որբաներ եւ կը խնդրե՞մ որ դատը շեղեալ
հրատարակելով վերջացնէ»:

Ասով ուրիշ աւագոյց մըն ալ տուած եղայ, իմ խաղաղասիրական զգացումներուս եւ միանգամայն առիթը հայթաթեցի Կարիշի Հայ հասարակութեան, օգտուելու Տեար Էգնականի որբախնամ տրամադրութիւններէ, որով տարեկան 35—4000 Ֆրանք նուիրել կը խոստանար Հայ որբերու Բարիշի մէջ կրթութեան: Ասիկայ Բարիշի Գոմիսէրի առջեւ տրուած յայտարարութեանց մէջ արձանագրուած է: Հիմա որ մենք իրեն կը ձգենք այդ որբերը թող սկսի գործին: (1)

7. Որբերու ճանապարհածախսին գալով Պրն. յօդուածագրին սպրդած կասկածելի հանգամանքներէն ետոջ մին իր երեւակայութենէն դուրս գոյութիւն ունի: Հանգանակութիւն մը օրինաւոր ու կանոնաւոր ըլլալու համար ինչ պայմաններ որ պէտք են, ամենքն ալ անթերի պահպանուած են: Որբանոցիս անուամբ կնքուած եւ թուահամարով նշանակուած ըստացազրեր տրուած են ամեն նուիրատուի, առանց բացառութեան: Մուտքին ու ելքին հաշիւն ալ տեւորիս սկիզբը, Յ, 4 եւ 5 էջերուն վրայ տրուած ըլլալով, այս խնդրով հետաքրքրուող ամէն ոք պատեհութիւն կուսնանայ խնդրը անձամբ քննելով հակնալ թէ երբ Պրն Մ. եւ ուրիշներ ծախսը քանի մը անգամներ հաւաքուած կը ներկայացնեն, յոկ արեւելեան չարամիտ չափազանցութիւններ ըրած կըլլան:

Իսկ նուիրտոաց մէկ մասին յայտնած որոշ փափաքին համեմատ եւ մեր խոստման հաւատարիմ մնալով անոնց անուանց չի հրատարակուե ու խոհեմ կարգադրութեան նկատմամբ Մ. ի յարուցած կասկածները բոլորովին անհիմն չունենցներ են, որոնք ոչ իրեն եւ ոչ ալ հասարակութեան վերաբերութիւն ունին, այլ այդ նուիրատուաց եւ մեր գիտնուիք բանն է: Միթէ նուիրատուք իրմէն աւելի իրաւունք չունին իրենց անուան չի հրատարակուելու պայմանին յարգել տալու: Եւ քանի որ ամեն նուիրատու իր ընդունած ստացազրին թուահամարը եւ տուածին գումարը պիտի տեսնէ հաշուոյն մէջ, ալ

(1) Դժբաղաբար կը լսենք թէ Պրն. Էգնական իր առեւանգած որբերը դպրոց դնելու տեղ իր աղամանդի գործարանը դրած է, ան շուշտ իր Հրէայ գործաւորներէն ազատելու համար:

ի՞նչ կը սահանջուի Եթէ մէկը զանց անուած է կըրնայ բողոքել: Միթէ անհրաժեշտ նուիրատուաց անունները անխոհեմութեամբ հրատարակելով թշնամի կառավարութեան մասնել հարկաւոր է գործին ուղիղ ըլլալը ցուցնելու համար: Դիտուած իրողութիւն մընէ, սակայն, որ իրօք գործնականապէս գոհողութիւն մը չընող անձինք աւելի բծախնդիր ու պահանջկոտ կըլլան քան թէ անոնք, որ օգտակար գործի մը համար ձեռքերնէն եկածին չափ աջակցել եւ օգնելու պատրաստ են:

Վերջացնելէս առաջ դիտողութիւն մըն ալ:

Յաճախ կը գանգատինք թէ մեր ազգային գործեր յառաջ չեն երթար, սակայն ի՞նչու եւ ի՞նչպէս յառաջ երթան, քանի որ անհիմն կասկածներու վրայ յենած, կամ ուրիշ չարժաւորիւններով, էրբոս շքեշքեք քաշելու, դէրբ չեքոցնելու նոքորք ենք ուժերնիս եւ ուշադրութիւննիս: Ասոր գործնական ապացոյցը տալով մեր որբերու խնդիրը, մեր ազգային մէկ մեծ վէճքը, ազգին կեանքը մաշող, լափող, քայցկեղը մատնանիչ կընէ:

Սհաւաստիկ պատուաւոր անցեալ մը ունեցող անհատ մը որ, իր վրայ վստահելով գացել հաստատուեր է Լոնարա, իր իսկ անհատական ջանքերով — ձգէ գոհողութիւնները, դժուարութիւնները, եւ ենթադրէ մինչեւ իսկ որ հանգիստ կեանք մը վարեր է — առանց ազգէն բան մը սպասելու կամ ուզելու, կամ մէկին վնաս մը տալու, կամ ժամանակը ուրիշներու հետ վայրապար կոխներով վատնելու, չեղած տեղէն բան մը գոյութեան բերի է,՝ հոտ ազատ Անգղիոյ ռատանին մէջ՝ ըստ բանին Արիմեան Հայրիկի, Հայկական հաստատութիւն մը հիմներ է, հայ որբերու ապաստանարան մը բացեր է, ու վեց տարիներէ իվեր շարունակելով կարողութիւն ու ձեռնհասութիւն, նաեւ ապագայ մեծ զարգացման եւ օգտակարութեան հնարաւորութիւնը ցոյց տուեր է, ու պատուաւոր կերպով

ներկայացուցեր է Հայն ու Հայրենիքի Յաջողեր է Անդրկապի ծանօթ անձնաւորութիւններէ քովի թէ մը կազմել անոնց վստահութիւնը շահելով, ու հաստատութիւնը անոնց հովանաւորութեան տակ գնել, գործը աւելի կանոնաւոր եւ հաստատուն ընելու համար:

Ասկէ աւելի թնչ կրնայ սպասել Ազգը իր Վէկ զաւակէն: Եւ հիմա ելեր են կարգ մը սիրտ չլիքաչոզ Ազգայինք, որ կրան թէ ազգը կը ներկայացնեն — վայ գլուխնուս եթէ շիտակ են — որ անարգանք ու նախաախնք կը տեղան գլխուն, կասկածներ կը սպրդեն, խուլ շուռններ կը պատցնեն, դաւաճանութիւններ կը ընեն, դաւեր կը շարեն եղածը քակել քանդելու Իսկոյն ասոնց խմբակը կստուգանայ. ով որ այդ հաստատութենէն յուսացած օգուտը չստացաւ կամ մերժման արժանացաւ, հաշիւը, պահանջը մէջ կը բերէ, եւ չի գտնուիր մէկը Կ. Պոլիսէն Թիֆլիս, Բարիզէն Էջմիածին որ մի քիչ մտաբեկելով կանկ առնել եւ հասարակութիւնը լրջութեան հրաւիրել ու առաջնորդելու համար ձայն բարձրացնելու քաջութիւնը ցուցնէր:

Այսչափ փամանակ իզուր սպասելէ յետոյ, ահա մեր վերջին խօսքը շնորհով, խղճերնիս հանդարտ կը շարունակենք մեր գործը, կրկին ատանց ազգէն օգնութիւն մը կամ գնահատում մը սպասելու, — որուն սակայն եթէ ալ ժանանանք, սիրով կընդունինք եւ կարճանագրենք ատանց արհամարհելու, — մեր անհատական ջանքերուն վստահացած եւ Աստուծոյ սպաւաւինած, գիտնալով որ արդարութեան կողքը ծանր կը դառնայ բայց վստահ կրնիմանայ, իր անխնայրուն տակ ճգմելով, փշրելով ստութիւնն ու անիրաւութիւն:

ՎԵՐՋ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն	1
ԲԱՐԻՋ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ Ո Ր Բ Ե Ր Ը	6
ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՐՏՈՒԻՎԱԿԸ	12
ԲԱՐԻՋԻ ԳԱՑԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ "ԱՆԱՀԻՏ"Ի ՍՈՒՏԵՐԸ	18
ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԹԷ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ	22
ՎԵՐՋԻՆ ՊԱՐՋ ԽՕՄՔ ՄԱՍՆ Ա.	26
ՄԱՍՆ Բ.	33



2013

« Ազգային գրադարան



NL0049090

